

ԼՈՒՐԵՐ ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻՑ

Ռումինիայի և Բուլղարիայի հայոց թեմերի բարեջան առաջնորդ Տ. Տիրայր արքեպ. Մարտիկյանի կարգադրությամբ Սուչավայի Ս. Խաչ եկեղեցու հոգևոր հովիվ, նորընծա վարդապետ Տ. Արամայիս Շլուկյանը սույն թվականի մայիսի 22-ին իր առաջին վարդապետական պատարագն է մատուցել Բուխարեստի հայոց առաջնորդանիստ Ս. Հրեշտակապետաց եկեղեցում՝ իր հոգևոր հոտի ներկայացուցիչների և տեղի բազմաթիվ հավատացյալների ներկայությամբ:

Սուրբ պատարագի ընթացքում Տ. Արամայիս վարդապետը խնամված մի քարոզ է արտասանել՝ նախ իր խորին երախտագիտությունը արտահայտելով Ամենայն Հայոց Հայրապետին՝ Նրա բարյացակամության համար իր վարդապետական աստիճանի շնորհատվության առթիվ, ինչպես նաև ռումինահայ թեմի գերաշնորհ առաջնորդին՝ նրա սույն կարգադրության համար, ապա ներկա հավատացյալներին խոսել է Ընդհանրական Եկեղեցու մեծ հայրապետ Կյուղեր Աղեքսանդրացու կյանքի ու գործունեության մասին՝ վեր հանելով նրա աստվածաբանական և քրիստոսաբանական հայացքների ունեցած դերն ու նշանակությունը քրիստոնեական Եկեղեցու վարդապետության ձևավորման գործում:

Հավարտ պատարագի՝ օրհնության խոսքով հանդես է եկել Տ. Տիրայր արքեպիսկոպոսը, որն իր խոսքի մեջ ընդգծել է ռումինահայ գաղութի հոգևոր կյանքի համար երիտասարդ, եռանդուն և շնորհալի հոգևորականների լուրջ պատրաստության և նրանց կողմից նվիրումով ծառայության կարևորությունը ներկա պայմաններում, ապա ի սրտե շնորհավորել է Տ. Արամայիս վարդապետին՝ օրհնելով և նորանոր հաջողություններ ցանկանալով նրան իր ապագա եկեղեցանվեր գործունեության ճանապարհին:

Նույն օրը, երեկոյան ժամը 19-ին, Բուխարեստի հայոց առաջնորդարանում, ի պատիվ թեմական առաջնորդի ծննդյան տարեդարձի և օրվա պատարագիչ նորընծա վարդապետի, «Հ. և Վ. Տուտյան» մշակույթի տան դահլիճում, որը վերջերս վերստին հանձնվել է ռումինահայ համայնքին, տեղի է ունեցել Բուխարեստի հայոց եկեղեցու երգչախմբի հոգևոր համերգը՝ ղեկավարությամբ Կ. Հարությունյանի և ի ներկայության շուրջ երկու հարյուր ծխականների: Երգչախմբի համերգի ծրագրին մաս են կազմել «Քրիստոս յարեաւ ի մեռելոց» և «Տէր ողորմեա» հոգևոր երգերը, ինչպես նաև Ֆրանց Շուբերտի «Ավե Մարիա»-ն և Ջ. Պերկոլեսիի «Ստաբատ Մատեր»-ից ընտրովի հատվածներ՝ շնորհալի մենակատարուհիների կողմից արվեստով մեկնաբանված:

Հոգևոր համերգից հետո ռումինահայ համայնքի Տիկնանց Հանձնախմբի կողմից կազմակերպվել է հյուրասիրություն առաջնորդարանի կենտրոնում: